ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N162-Ա
«21» ՕԳՈՍՏՈՍ 2023Թ

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ « ԶԱՌԻԹԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՓԱՌԱՆՁԵՄ ԱԲԵԼՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշմամբ հաստատված կարգի 33–րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 1-ի N 191-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի կողմից 2023 թվականի հուլիսի 26-ին ներկայացված դրական եզրակացությունն և Շուշանիկ Սարգսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2023 թվականի օգոստոսի 22-ից Շուշանիկ Սարգսյանին նշանակել ՀՀ Վայոց ձոր մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:
2. 2023 թվականի օգոստոսի 22-ից Փառանձեմ Աբելյանին ազատել ՀՀ Վայոց ձոր մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:
3. ՀՀ Վայոց ձոր մարզի «Զառիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

8/21/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2023թ օգոստոսի 21 -ի
N 162-Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ « ԶԱՌԻԹԱՓԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Գաբրիելյան Ավագ	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ /վարչության պետի պարտականությունները կատարող/

Անդամներ՝

Մաղաքյան Նարինե	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Սաֆարյան Աննա	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր տնտեսագետ